2661	Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)	6	6	1	20 533 600	20 533 600	0	28 865 400	28 865 400	0	23 600 620	23 600 620	0	0
2700	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ (տող2710+տող2720+տող2730+տող2740+տող2750+տող2760)	7	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
2800	ՀԱՆԳԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ (տող2810+տող2820)	8	0	0	39 739 300	39 739 300	0	90 238 081	40 918 900	49 319 181	72 962 376	32 976 636	39 985 740	
	որից՝													
2810	Հանգստի և սպորտի ծառայություններ	8	1	0	1 330 000	1 330 000	0	1 330 000	1 330 000	0	0	0	0	0
	որից՝													
2811	Հանգստի և սպորտի ծառայություններ	8	1	1	1 330 000	1 330 000	0	1 330 000	1 330 000	0	0	0	0	0
2820	Մշակութային ծառայություններ	8	2	0	38 409 300	38 409 300	0	88 908 081	39 588 900	49 319 181	72 962 376	32 976 636	39 985 740	
	որից՝													
2821	Գրադարաններ	8	2	1	18 150 700	18 150 700	0	18 164 400	18 164 400	0	16 769 191	16 769 191	0	
2823	Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ	8	2	3	16 328 600	16 328 600	0	63 313 681	16 994 500	46 319 181	54 006 125	14 020 385	39 985 740	

[illegible]

3021	Ծերություն	10	2	1	2 800 000	2 800 000	0	2 800 000	2 800 000	0	2 800 000	2 800 000	0
3070	Մոցիական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	10	7	0	2 500 000	2 500 000	0	2 500 000	2 500 000	0	1 879 950	1 879 950	0
	որից՝												
3071	Մոցիական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող)	10	7	1	2 500 000	2 500 000	0	2 500 000	2 500 000	0	1 879 950	1 879 950	0
3100	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ԶԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՄՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող 3110)	11	0	0	44 151 150	44 151 150	0	36 035 491	99 053 867	36 015 991	0	99 034 367	0
	որից՝												
3110	ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ	11	1	0	44 151 150	44 151 150	0	36 035 491	99 053 867	36 015 991	0	99 034 367	0
	որից՝												
3112	ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ	11	1	2	44 151 150	44 151 150	0	36 035 491	99 053 867	36 015 991	0	99 034 367	0

Հաշվետվություն Համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ ըստ տնտեսագիտական դասակարգման

02/01/20-31/12/20թ ժամանակահատվածի համար

Ի տնտեսագիտական դասակարգման հոդվածների		Տարեկան հատատված պլան				Տարեկան ճշտված պլան				Փաստացի			
Տողի		Ընդամենը (ս.5+ս.6)	այդ թվում՝		Ֆինդային մաս	Ընդամենը (ս.8+ս.9)	այդ թվում՝		Ֆինդային մաս	Ընդամենը (ս.11+ս.12)	վարչական մաս	այդ թվում՝	Ֆինդային մաս
NN	անվանումները	NN	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1													
4 000	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող4050+տող5000+տող 6000)			437 288 550	437 288 550	0	503 073 440	461 460 067	140 647 740	457 718 922	418 021 559	138 731 730	
	այդ թվում՝												
4 050	Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ (տող4100+տող4200+տող4300+տող4400+տող4500+տող4600+տող4700)	x		437 288 550	437 288 550	0	398 441 691	461 460 067	36 015 991	318 987 192	418 021 559	0	
	այդ թվում՝												
4 100	1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆ (տող4110+տող4120+տող4130)	x		101 347 200	101 347 200	x	97 096 100	97 096 100	x	86 214 801	86 214 801	x	
	այդ թվում՝												
4 110	ԴՐԱՍՈՎ ՎՃԱՐՎՈՐ ԱՇԽԱՏԱՎԱՐՉԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ (տող4111+տող4112+ տող4114)	x		101 347 200	101 347 200	x	97 096 100	97 096 100	x	86 214 801	86 214 801	x	
	որից՝												
4 111	-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	4111		96 847 200	96 847 200	x	92 596 100	92 596 100	x	82 637 301	82 637 301	x	

4 112	- Պարզեցումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ	4112	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	4 500 000	X	3 577 500	3 577 500	X
4 200	1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՉԵՌՔ ԲԵՐՈՒՄ (տող4210+տող4220+տող4230+տող4240+տող4250+տող4260)	X	108 042 600	108 042 600	108 042 600	108 042 600	108 042 600	108 042 600	X	81 743 813	81 743 813	X
	այդ թվում՝											
4 210	ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ (տող4211+տող4212+տող4213+տող4214+տող4215)	X	70 290 000	70 290 000	70 290 000	70 290 000	70 290 000	70 290 000	X	62 838 125	62 838 125	X
	որից՝											
4 212	- Էներգետիկ ծախսություններ	4212	14 300 000	14 300 000	14 300 000	14 300 000	14 300 000	14 300 000	X	15 964 535	15 964 535	X
4 213	- Գոմունակ ծախսություններ	4213	54 120 000	54 120 000	54 120 000	54 120 000	54 120 000	54 120 000	X	45 249 503	45 249 503	X
4 214	- Կապի ծախսություններ	4214	1 680 000	1 680 000	1 680 000	1 680 000	1 680 000	1 680 000	X	1 557 088	1 557 088	X
4 215	- Ապահովագրական ծախսեր	4215	190 000	190 000	190 000	190 000	190 000	190 000	X	67 000	67 000	X
4 220	ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐ (տող4221+տող4222+տող4223)	X	800 000	800 000	800 000	800 000	800 000	800 000	X	26 200	26 200	X
	որից՝											
4 221	- Ներքին գործուղումներ	4221	300 000	300 000	300 000	300 000	300 000	300 000	X	26 200	26 200	X
4 230	ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԵՌՔ ԲԵՐՈՒՄ (տող4231+տող4232+տող4233+տող4234+տող4235+տող4236+տող4237+տող4238)	X	12 435 000	12 435 000	12 435 000	12 435 000	12 435 000	12 435 000	X	6 075 726	6 075 726	X
4 232	- Համակարգչային ծախսություններ	4232	635 000	635 000	635 000	635 000	635 000	635 000	X	583 300	583 300	X

[illegible]

[illegible]

[illegible]

5 110	Շենքեր եվ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող5111+տող5112+տող5113)	x	53 000 000		x	53 000 000	162 125 981	x	162 125 981	107 619 248	x	107 619 248
	որից՝											
5 111	- Շենքերի և շինությունների ձեռք բերում	5111	0		x	0	0	x	0	0	x	0
5 112	- Շենքերի և շինությունների կառուցում	5112	53 000 000		x	53 000 000	159 125 981	x	159 125 981	107 619 248	x	107 619 248
5 113	- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	5113	0		x	0	3 000 000	x	3 000 000	0	x	0
5 120	ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵ (տող5121+ տող5122+տող5123)	x	6 500 000		x	6 500 000	53 721 167	x	53 721 167	48 567 685	x	48 567 685
	որից՝											
5 121	- Տրանսպորտային սարքավորումներ	5121	0		x	0	42 470 000	x	42 470 000	42 470 000	x	42 470 000
5 122	- Վարչական սարքավորումներ	5122	2 500 000		x	2 500 000	5 951 167	x	5 951 167	2 084 085	x	2 084 085
5 123	- Այլ մեքենաներ և սարքավորումներ	5129	4 000 000		x	4 000 000	5 300 000	x	5 300 000	4 013 600	x	4 013 600
5 130	ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵ (տող 5131+տող 5132+տող 5133+ տող5134)	x	2 500 000		x	2 500 000	6 000 000	x	6 000 000	1 080 000	x	1 080 000
	որից՝											
5 134	- Նախագծահետազոտական ծախսեր	5134	2 500 000		x	2 500 000	6 000 000	x	6 000 000	1 080 000	x	1 080 000
6 000	Գ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ (տող6100+տող6200+տող6300+տ այդ թվում՝	x	-62 000 000		x	-62 000 000	-117 215 399	x	-117 215 399	-18 535 203	x	-18 535 203
6 100	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՈՒՏՔԵՐ (տող6110+տող6120+տող6130)	x	0		x	0	0	x	0	-192 517	x	-192 517

6 130	ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8131	0	X	0	0	X	0	-192 517	X	-192 517
6 400	ՉԱՐՏԱԴՐԿԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ՝ (տող6410)	x	-62 000 000	X	-62 000 000	-117 215 399	X	-117 215 399	-18 342 686	X	-18 342 686
	այդ թվում՝										
6 410	ՀՈՂԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	8411	-62 000 000	X	-62 000 000	-117 215 399	X	-117 215 399	-18 342 686	X	-18 342 686

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ՀԱՅԱՔԱԳՐՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

Հ.ՄԻՐԶՈՅԱՆ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏ

✓ **Սպիտակ համայնքի Ս.Ավետիսյան 17, Ալ.Մանուկյան 14, Թորոսյան 21 բազմաբնակարան շենքերի էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքներ**

Ծրագրի արդյունքում Թորոսյան 21 բազմաբնակարան շենքում իրականացվել է արտաքին պատերի և նկուղի ջերմամեկուսացում, տանիքի ջերմամեկուսացում հանքաբամբակով, փոխարինվել է տանիքը և շքամուտքի պատուհանները:

Ս.Ավետիսյան 17 և Ալ.Մանուկյան 14 շենքերի էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցառումները կապված 2020թ.-ին ստեղծված ֆորս մաժորային իրավիճակով ըստ համաձայանգրի տեղափոխվել են 2021թ. :

Ծրագրի արժեքը կազմում է 106 701 475 ՀՀ դրամ, որից համայնքապետարանի ներդրումը 18 444 579 ՀՀ դրամ է, ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիոն միջոցներ՝ 62 633 767 ՀՀ դրամ, ՄԱԿ-ի զարգացման հիմնադրամի կողմից տրամադրվող միջոցները 25 623 130 ՀՀ դրամ:

Ծրագիրը մեկնարկվել է 2020թ.-ին ՀՀ Կառավարության կողմից հաստատված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում և կավարտվի 30.05.2021թ.:

Սպիտակ համայնքի քաղաքային հրապարակի ջրավազանի վերանորոգում, երգող, պարող և լուսային (ծրագրային ապահովմամբ) շատրվանների կառուցում և հրապարակի լուսային ձևավորում

Ծրագրի արդյունքում վերանորոգվել է քաղաքային հրապարակի ջրավազանը, կառուցվել է Ժամանակակից երգող, պարող և լուսային (ծրագրային ապահովմամբ) շատրվաններ:

Հրապարակի լուսային ձևավորման աշխատանքները կապված 2020թ.-ին ստեղծված ֆորս մաժորային իրավիճակով ըստ համաձայանգրի տեղափոխվել են 2021թ.:

Ծրագրի արժեքը կազմում է 79 264 888 ՀՀ դրամ, որից համայնքապետարանի ներդրումը 51 522 178 ՀՀ դրամ է, ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիոն միջոցներ՝ 27 742 710 ՀՀ դրամ:

Ծրագիրը մեկնարկվել է 2020թ.-ին ՀՀ Կառավարության կողմից հաստատված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում և կավարտվի 30.05.2021թ.:

Ծրագիրն ընդգրկված է եղել Սպիտակ համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագրում որպես «Քաղաքային հրապարակում լուսային էֆեկտներով շատրվանների կառուցում» ոլորտային կապիտալ ծրագիր:

✓ **Սպիտակ համայնքի Սպիտակ համայնքի Մուրացան և հարակից փողոցի, Սայաթ Նովա փողոցի, Մյասնիկյան փողոցի և 1-6 փակուղիների, Տեր-Սիմոնյան 1-7 փակուղիների, Ս.Ավետիսյան փողոցի 6-7-րդ նրբանցքների, Ուզբեկական, Առափնյա, Գրիգոր Լուսավորիչ, Այգեստան 1, Այգեստան 2, Հարավ Արևմտյան, Իտալական, Շվեյցարական թաղամասերի փողոցային լուսավորության համակարգերի և քաղաքային լոկալ օպտիակական ցանցի կառուցում**

Ծրագրի արդյունքում համայնքի Հարավ Արևմտյան, Իտալական, Շվեյցարական թաղամասերում կառուցվել են արդիական, էներգախնայող արտաքին լուսավորության նոր համակարգեր, կառուցվել է քաղաքային լոկալ օպտիակական ցանցի 50%-ը:

Մուրացան և հարակից փողոցների, Սայաթ Նովա փողոցի, Մյասնիկյան փողոցի և 1-6 փակուղիների, Տեր-Սիմոնյան 1-7 փակուղիների, Ս.Ավետիսյան փողոցի 6-7-րդ նրբանցքների, Ուզբեկական, Առափնյա, Գրիգոր Լուսավորիչ, Այգեստան 1, Այգեստան 2, Առափնյա թաղամասերի արդիական, էներգախնայող արտաքին լուսավորության նոր համակարգերի և քաղաքային լոկալ օպտիակական ցանցի կառուցման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Ծրագրի արժեքը կազմում է 114 987 703 ՀՀ դրամ, որից համայնքապետարանի ներդրումը 51 744 466 ՀՀ դրամ է, ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիոն միջոցներ՝ 63 243 236 ՀՀ դրամ:

Ծրագիրը մեկնարկվել է 2020թ.-ին ՀՀ Կառավարության կողմից հաստատված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում և կավարտվի 30.05.2021թ.:

Ծրագիրն ընդգրկված է եղել Սպիտակ համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագրում որպես «Փողոցների լուսավորության նոր ցանցի կառուցում» ոլորտային **Կափսուս ճրագիր**

✓ **Թորոսյան փողոց թիվ 26 բազմաբնակարան բնակելի շենքի հարևանությամբ գտնվող հենապատի վերանորոգում**

Ծրագրի արդյունքում վերանորոգվել է Թորոսյան փողոց թիվ 26 բազմաբնակարան բնակելի շենքի հարևանությամբ փուլուզման վտանգ ունեցող հենապատը:

Ծրագրի արժեքը 19 501 990 ՀՀ դրամ:

✓ **Արևային ֆոտովոլտային կայանների կառուցում**

Ծրագրի արդյունքում Սպիտակ համայնքի գեղարվեստի դպրոցի տանիքի և Ուզբեկական թաղամասի 5 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վրա կառուցվել է 10կՎտ և 60կՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայաններ, որոնց կողմից արտադրված էներգիան օգտագործվելու է համայնքի կարիքների համար:

Ծրագրի արժեքը 19 392 000 ՀՀ դրամ:

✓ **Ջափագրման ծառայությունների ձեռք բերում**

Ձեռք է բերվել 14 միավոր անշարժ գույքի չափագրման հաշվետվություն ծառայությունների ձեռք բերման նպատակով համայնքի բյուջեից ծախսվել է 230 000 ՀՀ դրամ:

✓ **Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերում**

Նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով համայնքի բյուջեից ծախսվել է 11 630 000 ՀՀ դրամ:

✓ 2020թ. ընթացքում համայնքապետարանի կողմից տրամադրվել է 16 շինարարության թույլտվություն՝ որից 4 հասարակական, 5 բնակելի և 7 այլ օբյեկտների կառուցման համար, 27 նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) և 3 շինարարության փաստագրման ակտ:

✓ **Գինականացվել է 16 ինքնակամկառուցողից 14-ը (9 բնակիչի 1 սրտաբական և 3 հասարակական նշանակության) կառուցված են եղել բաղադրվել են և իրավաբանական սնունդ սեփականության իրավիքով սպառնալու հոլանալու 2-ը (1 բնակիչի և 1 սրտաբական նշանակության) հանյնքային սեփականություն հանրապետության հոլանալու Ինքնակամկառուցողի գինականացումից հանյնքից բացված է 466212 ՀՀ դրամ Հանյնքի սեփականություն հանրապետության հոլանալու կառուցված 2 ինքնակամկառուցողից գինականացվել և գնման նախապատիվության իրավիքով օտարվել են կառուցվել իրականացված սնունդ գինականացված գույքի օտարումից բացվել մուսքը կազմել է 800528 ՀՀ դրամ**

✓ Օտարվել է 3,379 721 հա մակերեսով հողամաս (17 հողակտոր, որից 1-ը էներգետիկայի, 12-ը բնակավայրերի և 4-ը արդյունաբերության, ընդերք օգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության), համայնքի բյուջեի մուտքը կազմել է 18 342 686 ՀՀ դրամ:

✓ **Սպիտակ համայնքի փողոցների ասֆալտապատում**

Ծրագրի արդյունքում ասֆալտապատվել է Սպիտակ համայնքի Վարպետաց թաղամասից թիվ 8 հիմնական դպրոց տանող ու Վարպետաց թաղամասը Ուզբեկական, Իտալական, Շվեյցարական, Հարավ Արևմտյան թաղամասերին կապող ճանապարհը, Ուզբեկական թաղամասի թվով 5 բազմաբնակարան շենքերի բակային տարածքները, Թորոսյան 26 բազմաբնակարան շենքի բակային տարածքը, Ս.Ավետիսյան 17/1, 17/2, 15/1, 15/2, 7/6, 7/5, 7/4, 7/3, 7/2 և 7/1 բազմաբնակարան շենքերի բակային տարածքները, Եռանկյունի թաղամասի 1/1, 1/2, 5 բազմաբնակարան շենքերի բակային տարածքները:

Ծրագրի արժեքը 87 271 022 ՀՀ դրամ, որից համայնքի ներդրումը՝ 43 635 511 ՀՀ դրամ, ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիոն միջոցներ՝ 43 635 511 ՀՀ դրամ:

✓ **Գրունտային ճանապարհների վերանորոգում**

Գրունտային ճանապարհների նորոգման աշխատանքներ են կատարվել Սպիտակ համայնքի Այգեստան, Փյունիկ, Ուզբեկական, Էստոնական, Գրիգոր Լուսավորիչ թաղամասերում: Մ-3 մայրուղու հիմնանորոգման աշխատանքների ժամանակ ֆրեզավորված ասֆալտի հանույթը տեղափոխվել է համայնքի թաղամասեր ճանապարհների հարթեցման համար, հարթեցման աշխատանքները կատարվել են և՛ բնակիչների, և՛ համայնքապետարանի կողմից: Աշխատանքների կատարման համար համայնքի բյուջեից ծախսվել է 1 169 200 ՀՀ դրամ:

✓ Ճանապարհների փոսային նորոգման աշխատանքներ են իրականացվել համայնքի Իտալական թաղամաս տանող ճանապարհին, Կենտրոն 1, Կենտրոն 2, Վարպետաց թաղամասերում, Ալ.Մանուկյան փողոց 1-ին նրբանցքում, պոլիկլինկա տանող ճապարհին, Ս.Ավետիսյան հրապարակում, Մյասնիկյան, Շահումյան, Թորոսյան, Ն.Աճեմյան, Թումանյան, Չարենց փողոցներում, Շիրակի խճուղում, Այգեստան և Առափնյա թաղամասերում:

Ծրագրի արժեքը 3 800 000 ՀՀ դրամ:

✓ Համայնքի կարիքների համար 2020թ.-ի իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ձեռք է բերվել գրեյդեր և ավտո, փոշեկուլ մեքենա:

Ծրագրի արժեքը կազմում է 76 000 000 ՀՀ դրամ, որից համայնքապետարանի ներդրումը 41 800 000 ՀՀ դրամ է, ՀՀ պետական բյուջեից տրամադրվող սուբվենցիոն միջոցներ՝ 34 200 000 ՀՀ դրամ:

✓ Համայնքի տարածքում աղբահանության աշխատանքների իրականացման համար ծախսվել է 19 257 885 ՀՀ դրամ, աշխատանքները կատարվել են համաձայն Սպիտակ համայնքի

ավագանու կողմից հաստատված սխեմայի, Գնումների մասին ՀՀ օրենքի համաձայն իրականացված գնման արդյունքում մրցույթում հաղթող ճանաչված Նարինե ՍՊԸ-ի կողմից:

✓ 2020թ. ձեռք է բերվել 55 աղբարկղ, համայնքի բյուջեի միջոցներից ծախսվել է 3 014 000 ՀՀ դրամ:

✓ Համայնքի տարածքում սանիտարական և ձյան մաքրման աշխատանքների իրականացման համար համայնքի բյուջեի միջոցներից ծախսվել է 17 275 638 ՀՀ դրամ, աշխատանքները կատարվել են համաձայն Սպիտակ համայնքի ավագանու կողմից հաստատված սխեմայի, Գնումների մասին ՀՀ օրենքի համաձայն իրականացված գնման արդյունքում մրցույթում հաղթող ճանաչված Նարինե ՍՊԸ-ի

✓ Կանաչապատման աշխատանքների իրականացման համար համայնքի բյուջեի միջոցներից ծախսվել է 8 504 760 ՀՀ դրամ, աշխատանքները կատարվել են համաձայն կանաչապատման սխեմայի, Գնումների մասին ՀՀ օրենքի համաձայն իրականացված գնման արդյունքում մրցույթում հաղթող ճանաչված Նարինե ՍՊԸ-ի կողմից:

Ներդրողների և ֆինանսական միջոցների բացակայության պատճառով չեն իրականացվել Սպիտակ համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագրով 2019թ-ին **Նախատեսված ռեսուրսային կապիտալ ծրագրերը**

✓ «Քաղաքաշինական փաստաթղթերի, գլխավոր հատակագծի կազմում, հաստատում» երկամյա (աշխատանքների իրականացման թիրախային արժեքները ըստ տարիների **2019թ-ին 50% և 2020թ-ին 50%**) ծրագիրը: Ծրագրի ընդհանուր արժեքը 20 մլն ՀՀ դրամ:

✓ «Հասցեավորման անցկացում» երկամյա (աշխատանքների իրականացման թիրախային արժեքները ըստ տարիների **2019թ-ին 50% և 2020թ-ին 50%**) ծրագիրը: Ծրագրի ընդհանուր արժեքը 20 մլն ՀՀ դրամ:

✓ «Չարենցի, Շահումյան և Սայաթ-Նովա փողոցների հիմնանորոգում» ոլորտային կապիտալ ծրագիրը: Ծրագրի ընդհանուր արժեքը 299,1 մլն ՀՀ դրամ:

«Աղբավայրի ցանկապատում» ծրագիրը: Ծրագրի արժեքը 10,0 մլն ՀՀ դրամ

Նախադպրոցական կրթություն

«Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը գործում է 6 խմբով, հաստատություն ընդունված երեխաների թիվը՝ 198 երեխա, տարեկան միջին հաճախումը՝ 176 երեխա, աշխատողների ընդհանուր թիվը՝ 28:

2020թ-ին համայնքի 2017-2021թթ. հնգամյա զարգացման ծրագրով «Նախադպրոցական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ի գործունեությունն ապահովելու համար կանխատեսվել է 48079.1 հզ. դրամ, 2020թ. համայնքի ճշտված բյուջեով՝ նախատեսվել է 42079.1 հազ. դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 32012,9 հազ. դրամ, որից վճարվել է

- աշխատավարձ՝ 29017,5 հազ. դրամ,
- հավելավճար - 372,8 հազ. դրամ,
- կոմունալ ծառայությունների վճար – 108.6 հազ. դրամ
- սննդի ձեռք բերման գումար - 1808,3 հազ. դրամ
- Ընդանուր բնութի ծառայություն - 218,1 հազ. դրամ
- Քաթրիջի լիցք - 12,0 հազ. դրամ
- Գրասենյակային ապրանքներ - 43,4 հազ. դրամ
- Տնտեսական նյութեր - 79,4 հազ.դրամ
- Տնտեսական ապրանքներ - 352,8 հազ. դրամ

Մեկ երեխայի հաշվով տարեկան ծախսը կազմել է 16.2 հազ. դրամ, սննդի ծախսը օրական՝ 420 դրամ:

2020թ. ՆՈՒՀ-ի գործունեության ընթացքում չի ծախսվել 10066.2 հազ. դրամ:

Նախատեսվել է 9900,0 տեղական վճար (ծնողական միջոց), չի գանձվել 7935.8 հազ. դրամ:

2020թ.-ին գանձվել և համայնքի բյուջե է փոխանցվել 1964.2 հազ. դրամ տեղական վճար /ծնողական միջոց/ յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ ամսական 5,0 հազ. դրամ /:

Պակաս գանձումը և ծախսերի չկատարումը պայմանավորված է մանկապարտեզի գործունեությունը 2020թ. մարտի 13-ի դրության դադարեցմամբ, պայմանավորված COVID-19-ով:

«Սպիտակ համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը գործում է 2 խմբով, 2020թ. հաստատություն ընդունված երեխաների թիվը՝ 68, տարեկան միջին հաճախումը՝ 51, աշխատողների ընդհանուր թիվը՝ 13:

2020թ. համայնքի բյուջեով նախատեսվել է 23 100.0 հազ. դրամ, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 14 637.4 հազար դրամ:

Այդ թվում՝

- աշխատավարձ՝ 12 612.3 հազ. դրամ,
- էլեկտրաէներգիայի վարձավճար – 828.2 հազ. դրամ,
- կոմունալ ծառայությունների վճար – 28.4 հազ. դրամ
- սննդի ձեռք բերման գումար – 235.4 հազ. դրամ
- կապի ծառայություններ - 122.5 հազ. դրամ
- գույքի վարձակալություն - 515.5 հազ. դրամ
- ընդհանուր բնույթի այլ ծառայություններ - 117.4 հազ. դրամ
- քաթիրջի լիցքավորման ծախս - 7.5 հազ. դրամ
- գրասենյակային ապրանքներ - 10.0 հազ. դրամ
- տնտեսական նյութեր - 11.5 հազ. դրամ
- տնտեսական ապրանքներ - 52.2 հազ. դրամ
- հատուկ նպատակային այլ նյութեր - 62.4 հազ. դրամ
- պարտադիր վճարներ - 34.0 հազ. դրամ
- մեկ երեխայի հաշվով տարեկան ծախսը կազմել է 23,9 հազ. դրամ, սննդի ծախսը օրական՝ 420 դրամ:

2020թ. ծախսերի կատարողականը կազմել է 63,36%, չի ծախսվել 8462.6 հազ. դրամ:

2020թ.-ին նախատեսվել է մանկապարտեզի տեղական վճար / ծնողական միջոց / 340.0 հազ. դրամ, գանձվել և համայնքի բյուջե է փոխանցվել 415.6 հազ. դրամ տեղական վճար՝ ծնողական միջոց / յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ ամսական 5,0 հազ. դրամ /:

Պակաս գանձումը և ծախսերի չկատարումը պայմանավորված է մանկապարտեզի գործունեությունը 2020թ. մարտի 13-ի դրության դադարեցմամբ, պայմանավորված COVID-19-ով:

Ավագ խմբի երեխաներին դպրոց ճանապարհելու համար կազմակերպվել են ավարտական միջոցառումներ՝ հեռավար:

2020 թվականին մանկապարտեզներում համաճարակային կանոնների պահպանումն ապահովելու նպատակով Սպիտակի համայնքապետարանը համագործակցել է Վիշեգրադի հիմնադրամի հետ, արդյունքում հիմնադրամի կողմից տրամադրված 740 000 դրամ դրամաշնորհային միջոցներով ձեռք է բերվել 12 զգայուն ջրի ծորակ և 12 ձեռքերը չորացնելու էլեկտրական սարք (8-ական տրամադրվել է թիվ 2 և 4-ական թիվ 1 մանկապարտեզներին), 4 ջերմաչափ՝ յուրաքանչյուրին 2-ական:

Արտադպրոցական կրթություն

«Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ-ում սովորում է 148 աշակերտ, աշխատողների ընդհանուր թիվը՝ 24, որից 19՝ ուսուցիչներ: Պետական աջակցությամբ վարձավճարի փոխհատուցմամբ ազգային նվազարանների բաժնում սովորում է 20 աշակերտ, լարային բաժնում՝ 2 աշակերտ:

Հնգամյա զարգացման ծրագրով 2020թ-ի համար նախատեսվել է 33771,4 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորվել է 33514,4 հազար դրամ, որից վճարվել է

- աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճար 31343,9 հազար դրամ:
- էլեկտրաէներգիայի վճար՝ 588,6 հազար դրամ
- կոմունալ ծառայությունների վճար՝ 55 հազար դրամ,
- այլ ծախսեր 1169,9 հազար դրամ,

2020 թվականի ֆոնդային բյուջեի միջոցներով ձեռք է բերվել երաժշտական գործիքներ՝ 230 հազար դրամ արժողությամբ և տպիչ սարք՝ 135 հազար դրամ արժողությամբ:

ՀՈԱԿ-ի գործունեության ընթացքում տնտեսվել է 257,1 հազար դրամ, կրճատվել են էներգետիկ ու կոմունալ ծախսերը: Մեկ սովորողի ամսական փաստացի ծախսը կազմել է 18,9 հազար դրամ: 2020թ. ծախսերի կատարողականը կազմել է 96,5%: 2020թ.-ին նախատեսվել է 2520.0 հազար դրամ տեղական վճար՝ ծնողական միջոց / յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ ամսական 2,0 հազ. դրամ /: 2020թ. ՀՈԱԿ-ի աշխատանքները հիմնականում կազմակերպվել է հեռավար:

«Սպիտակի գեղարվեստի դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն» ՀՈԱԿ -ը գործում է 10 խմբով, սովորում են 70 երեխաներ, աշխատակիցների թիվը՝ 10:

Դպրոցի գործունեությունն ապահովելու համար ըստ համայնքի զարգացման 2017-2021 թվականների հնգամյա ծրագրի նախատեսվել է 9,800 հազար ՀՀ դրամ: 2020թ. համայնքի բյուջեով նախատեսվել է 12 185,0 հազար ՀՀ դրամ, ավելացել է նոր գորգագործության խմբակը, փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 11 731,2 ՀՀ դրամ, որից

- աշխատավարձ՝ 10,525,9 հազար ՀՀ դրամ,
- էլեկտրաէներգիա և գազամատակարարում – 518,800 ՀՀ դրամ
- կոմունալ ծառայություններ և աղբահանություն – 98,600 ՀՀ դրամ
- մասնագիտական ծառայություններ՝ գազասպասարկում - 17,8 ՀՀ դրամ
- այլ բնույթի ծախսեր՝ հրշեջ - 30,0 ՀՀ դրամ
- քաթրիջի լիցքավորման և թմբուկի վերանորոգման ծախսեր – 21,0 ՀՀ դրամ
- գրասենյակային ապրանքներ – 78,9 ՀՀ դրամ
- տնտեսական նյութեր – 12,6 ՀՀ դրամ
- հատուկ նպատակային նյութեր – 72,5 ՀՀ դրամ
- տնտեսական ապրանքներ- 147,1 ՀՀ դրամ
- վարչական սարքավորումներ – 148,0 ՀՀ դրամ

- այլ մեքենաներ և սարքավորումներ – 60.000 ՀՀ դրամ

Տնտեսվել է 453,800 դրամ: 2020թ. ծախսերի կատարողականը կազմել է 96,27%: Մեկ սովորողի ամսական փաստացի ծախսը կազմել է 19,5 դրամ: 2020թ.-ին գանձվել և համայնքի բյուջե է փոխանցվել 1 087 հազ. ՀՀ դրամ տեղական վճար՝ ծնողական միջոց / յուրաքանչյուր երեխայի հաշվով՝ ամսական 2,0 դրամ /:

Դպրոցում մշտապես գործող պատկերասրահի ցուցանմուշները՝ գունանկարի, գծանկարի, գորելենի, կավի, գորգի, կարի, դեկորատիվ կիրառական արվեստի գործերը պարբերաբար թարմացվել են՝ ՀՀ տոնական օրերին և հիշարժան տարեթվերին համահունչ: ՀՈԱԿ-ի աշխատանքները հիմնականում կազմակերպվել է հեռավար:

Հունիսի 25-ին դպրոցի սաները մասնակցել են «Ճգնաժամից դուրս՝ մաքուր էներգիա կանաչ վերականգնման և աճի համար» խորագրով նկարչական մրցույթին, ունեցել ենք 3 հաղթող: Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին հանձնվել է Հայաստանում ԵՄ պատվիրակության կողմից տրամադրված նվերների փաթեթ, իսկ երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցրած մասնակիցները՝ Սպիտակի համայնքապետ Գագիկ Սահակյանի կողմից պարգևատրվել են հավաստագրերով և հուշանվերներով:

«Սպիտակի մշակույթի տուն» ՀՈԱԿ

Մշակույթի տանը գործում են երգի, պարի, մանկական թատերական 3 խմբեր՝ 29 սաներով, աշխատակիցների թիվը՝ 12:

Մշակույթի տան գործունեությունն ապահովելու համար համայնքի զարգացման 2017-2021 թվականների հնգամյա ծրագրով նախատեսվել է 12 200,0 հազար դրամ, 2020թ. համայնքի բյուջեով՝ 16 989,8 հազար դրամ: Փաստացի կատարված ծախսերի դիմաց ֆինանսավորվել է 14020,5 հազար դրամ, որից

- Աշխատավարձ - 12 476,6 հազար դրամ
- Էլեկտրաէներգիայի վարձավճար - 298,8 հազար դրամ
- Կոմունալ ծառայությունների վճարներ - 235,6 հազար դրամ

- Այլ ծախսեր – 1009,5 հազար դրամ, որից՝
- Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ - 50,0 հազար դրամ
- Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում - 10,5 հազար դրամ
- Գրասենյակային նյութեր և հագուստ – 34,5 հազար դրամ
- Կենցաղային և հանրային սննդի նյութեր – 72,3 հազար դրամ
- Հատուկ նպատակային այլ նյութեր – 607,2 հազար դրամ
- Հիմնական միջոցներ - 235,0 հազար դրամ

Նորոգման աշխատանքներ - 779,3 հազար դրամ (2020թ. չիրականացված վճար՝ պարտք):

Տնտեսվել է 2190,0 հազար դրամ: 2020 թվականի ծախսերի կատարողականը կազմել է 82,5%: 2020 թվականին նախատեսվել է 148,0 հազար դրամ տեղական վճար՝ ծնողական միջոց / յուրաքանչյուր երեխայի հաշվով ամսական 2,0 հազար դրամ /:

«Սպիտակի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ, աշխատակիցների թիվը 15, որից 2-ը թանգարանային բաժնում, 4-ը օժանդակ աշխատողներ:

2020թ. գրադարանի գործունեությունը ապահովելու համար համայնքի բյուջեով նախատեսվել է 18 164.4 հազ. դրամ: Փաստացի ծախսը կազմել է 16781.9 հազ. դրամ, որից համայնքային բյուջեից ֆինանսավորվել է 16769.2 հազ. դրամ, այլ աղբյուրներից 12,7 հազ. դրամ:

- աշխատավարձ՝ 16108.4 հազ. դրամ
- կոմունալ ծառայությունների վճար՝ 6.0 հազ. դրամ
- կապի ծառայություն՝ 154.4 հազ. դրամ
- տեղեկատվական ծառայություն՝ 169.3 հազ. դրամ
- այլ ծախսեր 343.8 հազ. դրամ

Տնտեսվել է 1395.2 հազ. դրամ:

«Սպիտակի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ-ի գրքային հավաքածուն 01.01.2020թ. դրությամբ կազմում է 30540 օրինակ, 13 օրինակ տեսա-լսողական նյութեր, լրակազմ՝ 221 օրինակ, 125 անուն ամսագրեր:

2020թ. գրադարանը համալրվել է 319 օրինակ գրականությամբ, միայն Իբրի Արմենիա «մանկապատանեկան գրքի միջազգային խորհրդի հայաստանյան կոմիտե» մշակութային ՀԿ-ն /Նախագահ՝ Ռ. Տոնոյան/ 2020թ. 129 օրինակ նոր գրականություն է նվիրել գրադարանին՝ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Թանգարանային առարկաների թիվը համալրվել է 1 միավորով և կազմում է 237:

2020թ. թանգարանային բաժինը նվիրատվությամբ ստացել է 1 գիրք և 2 գրավոր մատյան:

Գրադարանը, բացի իր գործառույթներից, 2020 թվականին ակտիվորեն արձագանքել է նաև հիշարժան տարեթվերին՝ հիմնականում հեռավար եղանակով: Կազմակերպվել են Հովհ. Թումանյանի ծննդյան օրվան նվիրված միջոցառում և նվիրատվության ակցիա, «Վահան Տերյան» գրական ցերեկույթը, գրադարանավարի օրը, գրական ցերեկույթներ նվիրված Խնկո Ապոր ծննդյան 150-ամյակին, Ղ. Աղայանի ծննդյան 180-ամյակին, կոմպոզիտոր Ալ. Աճեմյանի ծննդյան 95-ամյակին: Հեռավար եղանակով մասնակցել են հանրապետական ընթերցանության 4-րդ մարաթոնին, վարպետության դասերին, ընթերցանության խթանմանը նվիրված միջոցառումներին՝ «Սարյանական ակնթարթներ», «Ֆրանց Վերֆել-130», «Մոնթե Մելքոնյան», «Հունիսի 1», «Հանրապետության տոն», «Ընտանեկան թանգարան» անկյան ձևավորում, հայրենասիրական թեմայով բազմաթիվ ցուցադրություններ՝ «Մենք ոգու ժողովուրդ ենք», «Ուժդ ու կամքդ զորեղ է», «Գետակտ հավերժ է», «Հայ զինվորին», «Անկախությունը պատասխանատվություն է» և այլ խորագրերով:

Քաղաքային գրադարանը հայրենասիրական դաստիարակության, ազգային ոգու և մշակութային արժեքների պահպանման նպատակով սերտորեն համագործակցել է քաղաքի հանրակրթական բոլոր դպրոցների, Սպիտակի պետական քոլեջի, Սպիտակի տարեցների խնամքի կենտրոնի, Հայ արվեստի տուն գրական-երաժշտական-հասարակական կազմակերպության, Ղարաբաղյան պատերազմի վետերանների, Սպիտակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի, մանկապարտեզների և տարբեր հասարակական կազմակերպությունների հետ:

Համայնքում կազմակերպվել են նաև հետևյալ միջոցառումները՝

2020թ. ավանդույթի համաձայն Հայոց բանակի օրվա կապակցությամբ համայնքապետարանի երիտասարդ աշխատակիցները հունվարի 28-ին այցելություններ են կատարել ժամկետային զինծառայողների ընտանիքներ և նրանց հանձնել խորհրդանշական նվերներ / կոնյակ /, կոնֆետներ, շնորհակալագրեր և շնորհավորական բացիկներ:

Նշվել են՝

- 2020թ. մարտի 11-ին Արևելյան Ճապոնիայի ցունամիի 9-րդ տարելիցը
- 2020թ. Ապրիլյան քառօրյա պատերազմի 4-րդ տարելիցը
- 2020թ. ապրիլի 24-ին հայոց ցեղասպանության 105-րդ տարելիցը
- Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 75 ամյակը, Շուշիի ազատագրման և Արցախի պաշտպանության բանակի կազմավորման 28 ամյակը: ՀՄՊ-ի մասնակիցներ՝ Պրոկոֆի Հակոբյանին և Հրաչիկ Աջամյանին հանձնվել է դրամական պարգև՝ յուրաքանչյուրին 75 000 դրամ:
- ՀՀ ԱԻՆ աշխատողի օրը: Մասնագիտական տոնի առթիվ խրախուսական նվերներ, շնորհակալագրեր է հանձնվել ՀՀ ԱԻՆ Սպիտակի հրշեջ-փրկարարական ջոկատի աշխատակիցներին:
- 1988թ. Սպիտակի երկրաշարժի 32-րդ տարելիցը
- Կորոնավիրուսային համավարակով պայմանավորված Սպիտակ համայնքում 2020 թվականին Ամանորյա միջոցառումներ չեն իրականացվել: Կատարվել է 2020 թվականի արցախյան պատերազմում զոհված և Սպիտակ համայնքի գերեզմանատանը այդ պահի դրությամբ հուղարկավորված 16 զինծառայողների գերեզմանների ձևավորում:

Ընդամենը բոլոր միջոցառումների համար ծախսվել է 1.462.690 հազար դրամ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏ

Սոցիալական պաշտպանությանն ուղղված 2020 թվականի համայնքի բյուջեով նախատեսվել է 5.300 000 ՀՀ դրամ, որից ծախսվել է 4 680 000 ՀՀ դրամը

1. Սպիտակի համայնքապետարանի և <<Առաքելություն Հայաստան>> ԲՀԿ-ի համատեղ ներդրումների արդյունքում Սպիտակում <<Առաքելություն Հայաստան>> ԲՀԿ-ի ցերեկային կենտրոնի միջոցով իրականացվում է համայնքի սոցիալապես անապահով տարեցների, հաշմանդամների և այլ անապահով խմբերի առաջնային սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված սոցիալ-առողջապահական ծառայությունների կազմակերպում և մատուցում: Համաձայնագրի ընդհանուր արժեքը 10 800 000 ՀՀ դրամ է, որից 2 800 000 ՀՀ դրամը տրամադրվել է համայնքապետարանի կողմից, 8 000 000 ՀՀ դրամը <<Առաքելություն Հայաստան>> ԲՀԿ-ի ներդրումն է:
2. Կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված սոցիալապես անապահով 17 ընտանիքների տրամադրվել է դրամական աջակցություն 315 000 ՀՀ դրամ,
3. Հայրենական Մեծ պատերազմի 2 վետերանների ընտանիքներին տրամադրվել է 75 000-ական ՀՀ դրամ,
4. 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության սանձազերծած պատերազմում վիրավորված և բուժման մեջ գտնվող, կյանքի դժարին իրավիճակում հայտնված 14 զինծառայողների ընտանիքների՝ 700 000 ՀՀ դրամ,
5. Կորոնավիրուսի հետևանքով համապատասխան մարմինների ցուցումով ինքնամեկուսացված՝ սննդամթերքի ու սանիտարահիգիենիկ պարագաների կարիք ունեցող 35 անձանց տրամադրվել են սանիտարահիգիենիկ պարագաներ ու սննդամթերք՝ 368 840 ՀՀ դրամի չափով:
6. 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության սանձազերծած պատերազմի հետևանքով Արցախի հանրապետությունից տարհանված և Սպիտակ համայնք սեպտեմբերի 29-ից տեղափոխված 65 ընտանիքի համար 247 110 ՀՀ դրամի ձեռք է բերվել սննդամթերք, 99 000 ՀՀ դրամի՝ տնտեսական ապրանքներ:

Ծախսերի կատարողականը կազմել է 75,2%:

Համայնքի ծառերի էտումից առաջացած վառելափայտից 18 սոցիալապես անապահով ընտանիքի տրամադրվել է վառելափայտ:

Սպիտակի համայնքապետարանի և “Կամրջակ” սոցիալ բարեգործական հասարակական կազմակերպության համագործակցության արդյունքում 2020թ. ընթացքում համայնքի սոցիալապես անապահով 306 ընտանիքի տրամադրվել է սննդօգնություն, 162 1-ից 6-րդ դասարանների երեխաների աշնանային կոշիկ, գրենական պիտույքներ, 114 1-ից 4-րդ դասարանների երեխաների՝ ձմեռային կոշիկ, սպորտային հագուստ:

Նոր կորոնավիրուսի վարակի տարածման կանխարգելմամբ պայմանավորված՝ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության պատճառով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և աշխատանք կորցրած 1176 ընտանիքի ապրիլ-հունիս ամիսներին տրամադրվել են սննդի փաթեթներ <<Ֆօքուս օն չիլդրեն նաու>> ԲՀԿ-ի, Հայկական կարմիր խաչի ընկերության, <<Կամրջակ>> ՍԲՀԿ-ի, <<Երևան իմ սեր>> և <<Իզմիրլյան>> հիմնադրամների, <<Համբարձումյանների ընտանիք>> սոցիալական աջակցության բարեգործական հիմնադրամի կողմից:

2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության սանձազերծած պատերազմի հետևանքով Արցախի հանրապետությունից տարհանված և Սպիտակ համայնք սեպտեմբերի 29-ից տեղափոխված 65 ընտանիք մարզպետարանի, տեղական և միջազգային ՀԿ-ների, համայնքում գործող տարբեր հիմնարկների, բազմաթիվ սպիտակցիների, բարերաների, անհատների, արտերկրում ապրող մեր հայրենակիցների ջանքերի շնորհիվ ստացել են կացարան, սնունդ, հագուստ, անկողնային պարագաներ, մանկական տակդիրներ և սնունդ, առաջին անհրաժեշտության հիգիենայի պարագաներ և այլն: Անհրաժեշտության դեպքում Սպիտակի բժշկական կենտրոնում կատարվել են բուժզննում, բժշկական խորհրդատվություններ, հետազոտություններ, ձեռք են բերվել անհրաժեշտ դեղորայքները: Լուծվել են նաև նրանցից մի քանիսի փաստաթղթերի հետ կապված խնդիրները:

25 վիրավոր զինծառայողների ընտանիքներին կրկին համայնքապետարանի, մարզպետարանի, տեղական և միջազգային ՀԿ-ների, արտերկրում ապրող մեր հայրենակիցների կողմից ցուցաբերվել են օգնություններ՝ գումարի, սննդի, հագուստի, առաջին անհրաժեշտության հիգիենայի պարագաների և այլնի տեսքով:

ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Սպիտակ համայնքի մշտական բնակչության թիվը ՀՀ ոստիկանության ԱՎՎ Սպիտակի անձնագրային բաժնի կողմից տրված տվյալներով 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմել է 17 167 մարդ, որից տղամարդիկ կազմում են բնակչության 50,2%-ը (8 611 մարդ), կանայք՝ 49,8% (8 556 կին)

2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ

Փաստացի բնակվողների թիվը կազմում է 9742 բնակիչ:

Նպաստառուների թիվը՝ 882 ընտանիք:

2020թ. ընթացքում Սպիտակ համայնքում ծնվել է 154 երեխա, մահացել 146 մարդ, գրանցվել է 48 ամուսնություն, 10 ամուսնալուծություն:

Տեղական ինքնակառավարման մարմիններն են՝

1. Համայնքի ավագանին՝ բաղկացած 14 անդամից, (ընտրված 2016 թվականի հոկտեմբերի 2-ին) լիազորությունների սկիզբը 2016թ. նոյեմբերի 21-ից: (2020 թվականին համայնքի ավագանու 15 անդամներից 1-ի լիազորությունները դադարեցվել է)

2. Համայնքի ղեկավարը (ընտրված 2016 թվականի ապրիլի 17-ին), լիազորությունների սկիզբը 2016թ հունիսի 6-ից:

Համայնքի ղեկավարն իր լիազորություններն իրականացնում է հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց, աշխատակազմի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների միջոցով:

Համայնքապետարանի աշխատակազմի հաստիքային միավորների թիվը 45,75 է, որից քաղաքական և հայեցողական պաշտոններ-5, համայնքային ծառայության պաշտոններ-30, տեխնիկական սպասարկման անձնակազմ-10,75:

2020 թվականի ընթացքում փակվել են աշխատակազմի սոցիալական, մշակութային, երտասարդության, սպորտի և լրատվության կառուցվածքային ստորաբաժանումը՝ 6 հաստիքային միավորով, ինչպես նաև ներքին աուդիտի կառուցվածքային ստորաբաժանումը՝ 2 հաստիքային միավորով: Փոխարենը աշխատակազմը համալրվել է համայնքի ղեկավարի օգնական-հասարակայնության հետ կապերի պատասխանատուի, աշխատակազմի գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատողի, աշխատակազմի գլխավոր մասնագետի հաստիքային միավորներով:

2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ համայնքապետարանի աշխատակազմում թափուր հաստիքների թիվը 5-ն են:

2020 թվականի ընթացքում համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել է 4 մրցույթ, որից 2-ը չի կայացել (1-ը՝ հանձնաժողովի անդամներից կեսից ավելիի բացակայության պատճառով, իսկ մյուսը՝ հանրապետությունում հայտարարված ռազմական դրությամբ պայմանավորված): Հայտարարված մրցույթներին մասնակցած 15 անդամներից հաղթող են ճանաչվել 7-ը:

2020թ համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է եղել 3 կառուցվածքային և 1 առանձնացված ստորաբաժանումներից:

Համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը՝

Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմ

Կառուցվածքային ստորաբաժանումներ

1. Ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժին
2. Քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժին
3. Քարտուղարության բաժին

Առանձնացված ստորաբաժանում

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Սպիտակի տարածքային բաժին:

Համայնքի ենթակայությամբ գործում են՝

«Սպիտակ համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ,

«Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ,

«Սպիտակի երաժշտական դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն»

ՀՈԱԿ,

«Սպիտակի գեղարվեստի դպրոց կրթադաստիարակչական ուսումնական հաստատություն»

ՀՈԱԿ,

«Սպիտակի քաղաքային գրադարան» ՀՈԱԿ,

«Սպիտակի մշակույթի տուն» ՀՈԱԿ,

«Սպիտակի բնակարանների և ենթակառուցվածքների սպասարկման գրասենյակ» ՀՈԱԿ

կազմակերպությունները:

Բնակչության մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը

ՏԻՄ-երի գործունեությունը դարձել է համեմատաբար ավելի թափանցիկ և հրապարակային,

որն զգալիորեն նպաստում է համայնքի բնակչության իրազեկվածությանը ՏԻՄ-երի ընդունած որոշումներին և կատարած աշխատանքներին: Սակայն համայնքի բնակիչները դեռևս բավականին ակտիվություն չեն ցուցաբերում ՏԻՄ-երի կողմից կազմակերպված հանրային քննարկումներին մասնակցելու ուղղությամբ: Հանրային քննարկումներին նրանց մասնակցությունն ապահովվում է հրավերների միջոցով:

Համայնքի ավագանու նիստերը 2016թ հուլիսից հեռարձակվում են, որը նպաստում է ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ բնակչության իրազեկվածության բարձրացմանը, վստահության ամրապնդմանը, նիստերի անցկացման մասին հայտարարությունը տեղադրվում է համայնքի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում:

2020 թվականի ընթացքում համայնքապետարանում մուտքագրվել է քաղաքացիներից ստացված 413 դիմում, որից՝

-14%-ը դրամական օգնություն տրամադրելու մասին – 57 դիմում

- 1,2%-ը բնակարանային հարցերով - 5 դիմում

- 2,7%-ը գույքահարկի գծով արտոնություն տրամադրելու մասին – 11 դիմում

-22,1%-ը քաղաքաշինության և հողօգտագործման հարաբերությունները կարգավորելու մասով – 91 դիմում

-19,1%-ը անձնակազմի վերաբերյալ – 79 դիմում

15,2%-ը տեղեկանքի տրամադրում- 63 դիմում

- 26%-ը այլ բնույթի - 107 դիմում

ՀՀ վարչապետին դիմել են համայնքի 19 բնակիչ, ՀՀ Լոռու մարզպետին հասցեագրվել է 10 դիմում:

Դիմումներին սահմանված ժամկետներում հիմնականում տրվել է համապատասխան ընթացք:

Իրավաբանական անձանցից ստացվել է 1971 գրություն:

Համայնքապետարանի կողմից պատրաստվել են 2017 ելից գրություններ, որոնք ուղարկվել են հասցեատերերին,

Համայնքապետարանի աշխատակազմի կողմից տրամադրվել է թվով 400 տեղեկանք՝ ըստ պահանջի:

2020 թվականի ընթացքում համայնքապետարանում ստացված հայտերին համապատասխան համայնքի ղեկավարի կողմից համայնքի վարչական տարածքում գործող

տնտեսվարող սուբյեկտներին տրվել է ոգելից և ավահովային խմիչքների ու ծխախոտի արտադրանքի վաճառքի, արտաքին գովազդի տեղադրման, հանրային սննդի կազմակերպման և իրացման, սեղմված գազի, տեխնիկական հեղուկների և հեղուկ վառելիքի վաճառքի թվով 53 թույլտվություն:

Համայնքի ղեկավարն ընդունել է 309 որոշում, արձակել՝ 130 կարգադրություն:

Կայացել է Սպիտակ համայնքի ավագանու 13 նիստ, ընդունվել 73 որոշում:

Աշխատակազմի քարտուղարի կողմից արձակվել է 132 հրաման:

Համայնքի ղեկավարի մոտ ընդունելությանը մասնակցել է 107 քաղաքացի:

2020 թվականին գույքահարկի պարտավորությունները չկատարելու գծով հարուցվել է 5 վարչական վարույթ, որի արդյունքում ընդունվել են գույքահարկի գումարի գանձման որոշումներ՝ ընդհանուր 2 977 411 ՀՀ դրամի չափով:

2020 թվականի ընթացքում հարուցվել է վարչական իրավախախտման 8 գործ, որի արդյունքում ընդունվել է վարչական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումներ՝ ընդհանուր 1400 000 ՀՀ դրամի չափով, որոնցից 7 որոշումները կատարված են աբողջությամբ՝ 1 250 000 ՀՀ դրամի չափով, իսկ 1 որոշումը կատարված է մասնակի 50 000 ՀՀ դրամի չափով:

ՔԿԱԳ Սպիտակի տարածքային բաժնում 2020թ. կատարվել են հետևյալ ակտային գրանցումները (ներառյալ Սպիտակի տարածաշրջանը)՝

- | | |
|---|---|
| 1. ծննդյան -468, | 7. Անվան, ազգանվան, հայրանվան փոխման -9, |
| 2. ամուսնության- 135, | 8. Գրանցումների ուղղման, լրացման -148, |
| 3. ամուսնալուծության – 15, | 9.Վկայականի կրկնօրինակների տրամադրում - 135 |
| 4. հայրության ճանաչման- 290, | 10. տեղեկանքներ – 88, |
| 5. որդեգրման -0, | 11.Վկայականի կրկնօրինակ ստանալու ծանուցում -0 |
| 6. քաղաքացիական կացության
վերականգնման -4, | 12. մահվան -390: |